



Հայաստանի Հանրապետության կառավարության

ՈՐՈՇՈՒՄ

10 Ապրիլ 2014, 532 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 363-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու մասին» N 363-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների.

2) որոշման 2-րդ կետում «5,237,795.0 թիվը փոխարինել «1,013,497.0» թվով.

3) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «364,000.0», 2-րդ ենթակետում «593,860.0», 3-րդ ենթակետում «502,995.0», 4-րդ ենթակետում «736,590.0», 5-րդ ենթակետում «858,320.0», 6-րդ ենթակետում «551,000.0», 7-րդ ենթակետում «614,385.0», 8-րդ ենթակետում «357,000.0», 9-րդ ենթակետում «195,400.0» և 10-րդ ենթակետում «464,245.0» թվերը համապատասխանաբար փոխարինել «84,897.0», «238,000.0», «317,000.0», «51,000.0», «84,000.0», «71,900.0», «97,700.0», «23,000.0», «12,400.0» և «33,600.0» թվերով.

4) որոշման NN 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15 և 16 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15 և 16 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Տիգրան Մարգարյան

Հավելված N 9
 ՀՀ կառավարության 2014 թվականի
 ապրիլի 10-ի N 532 - Ն որոշման

«Հավելված N 9
 ՀՀ կառավարության 2014 թվականի
 մարտի 19-ի N 363 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

(հազ. դրամ)

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների և աշխատանքների անվանումները	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	ԸՆԴԱՄԵՆԸ	317,000.0	317,000.0	317,000.0
	այդ թվում՝			
1	Շենքերի և շինությունների շինարարություն	60,000.0	60,000.0	60,000.0
	որից՝			
1.1	Մայիսյան համայնքում ոռոգման ջրի մեկ խորքային հորի հորատում	30,000.0	30,000.0	30,000.0
1.2	Եղեգնուտ համայնքում ոռոգման ջրի մեկ խորքային հորի հորատում	30,000.0	30,000.0	30,000.0
2	Այլ բնթացիկ դրամաշնորհներ	243,000.0	243,000.0	243,000.0
	որից՝			
2.1	Արմավիրի մարզի ցրտահարությունից տուժած համայնքների ոռոգման ջրի վարձի 50 տոկոսի չափով փոխհատուցման նպատակավ Արմավիր մարզի բնակիչներին պետական աջակցության ցուցաբերում	168,000.0	168,000.0	168,000.0
2.2	Արմավիր մարզի ցրտահարությունից տուժած համայնքների հողի հարկի չափով փոխհատուցման նպատակավ Արմավիր մարզի բնակիչներին պետական աջակցության ցուցաբերում	75,000.0	75,000.0	75,000.0
3	Նախագծահետազոտական ծախսեր	14,000.0	14,000.0	14,000.0

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ